ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՈՎ Է ԻՐԱՎԱՍՈՒ ՍՏԱՆԱԼ 300 ԼԱՐԻԻ ՄԻԱՆԳԱՄՅԱ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌԻՉ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ՝ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՍՈՒՅՆ ԿԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի հակաճգնաժամային ծրագրով բնակչության համար նախատեսված սոցիալական օգնության կետերից մեկն ընդգրկում է մարդկանց առանձին խավերի՝ 300 լարիի միանգամյա օգնության ցուցաբերում: Խմբագրության էլեկտրոնային փոստով մեծ թվով նամակներ են ստացվում այն մարդկանցից, ովքեր, իրենց կարծիքով, կարող են հավակնել այդ օգնության ստացմանը: Մենք ստացած հարցերը հասցեագրեցինք զբաղվածության աջակցության պետական գործակալությանը: Ստորեւ ներկայացնում ենք գերատեսչությունից ստացված պատասխանները:

- Ո՞վ է իրավասու ստանալ 300 լարիի միանգամյա փոխհատուցում.

Միանգամյա 300 լարիի փոխհատուցում իրավասու է ստանալ նա, ով տուժել է կորոնավիրուսի համավարակի տարածման ժամանակահատվածում.

* Վարձու աշխատողը, ով, մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 27-ը, վարձու աշխատանք էր իրականացնում այն գործատուի մոտ, ով նոյեմբերի 28-ից սահմանված սահմանափակումների պատճառով դադարեցրել է աշխատանքը եւ, սկսած այդ ժամանակից, գործատուից չի ստանում աշխատավարձ (այդ թվում՝ նաեւ աշխատանքային պայմանագրի չեղարկման պատճառով):

* Անհատական ձեռներեցը, փոքր բիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը, ֆիկսացված հարկ վճարող ֆիզիկական անձը եւ միկրոբիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը, ով, ընթացիկ տարվա չորրորդ եռամսյակում իրականացնում էր տնտեսական գործունեություն եւ 2020 թվականի նոյեմբերի 30-ից, սահմանված սահմանափակումների պատճառով, աշխատանքը դադարեցրել է եւ բյուջեից ֆինանսավորում չի ստանում:

* Վերոնշյալ անձանցից բացի, ցանկացած ֆիզիկական անձ (ինքնազբաղված անձը), ով փաստացի տնտեսական գործունեություն էր իրականացնում Վրաստանում՝ որպես հարկատու գրանցված այն անձի օբյեկտում, ով նոյեմբերի 28-ից սահմանված սահմանափակումների պատճառով դադարեցրել է աշխատանքը:

- Ո՞վ եւ ի՞նչ ձեւով է ներկայացնելու տեղեկանք/դիմում՝ վարձու աշխատողներին միանգամյա 300 լարիի փոխհատուցում հանձնելու նպատակով:

Վարձու աշխատողներին միանգամյա 300 լարիի փոխհատուցում հանձնելու նպատակով.

- Գործատուն, ով նոյեմբերի 28-ից սահմանված սահմանափակումների պատճառով դադարեցրել է աշխատանքը, 2020 թվականի դեկտեմբեր 3-ից մինչեւ դեկտեմբերի 24-ը եկամուտների ծառայությանը ներկայացնելու է տեղեկանք/դիմում՝ իր կողմից վարձակալված այն անձանց վերաբերյալ, ովքեր, մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 27-ն աշխատում էին նրա օբյեկտներում եւ 2020 թվականի նոյեմբերի 28-ից մինչեւ դեկտեմբերի 24-ի ժամանակահատվածում, վարձատրություն չեն ստանում եւ ունեն վերոնշյալ փոխհատուցումը ստանալու իրավունք:

Նշենք, որ գործատուները համապատասխան տեղեկանք/դիմում ներկայացնելու են եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններին:

- Իրավասո՞ւ է, արդյոք, գործատուն նման տեղեկանք/դիմում ներկայացնել այն վարձու աշխատողի վերաբերյալ, ով 2020 թվականի նոյեմբերի 27-ից սահմանված սահմանափակումների պատճառով չի աշխատում եւ վարձատրություն չի ստանում, թեպետ օբյեկտը շարունակում է աշխատանքը հեռավար աշխատակարգով:

- Գործատուն, ում տնօրինությամբ օբյեկտը նոյեմբերի 28-ից սահմանված սահմանափակումներից հետո շարունակում է աշխատել հեռավար կարգով, իրավասու է տեղեկանք/դիմում ներկայացնել այն վարձու աշխատողների վերաբերյալ, ովքեր սահմանափակումների սահմանումից հետո, այսինքն՝ նոյեմբերի 28-ից մինչեւ դեկտեմբերի 24-ն աշխատավարձ չեն ստանում:

- Իրավասո՞ւ է, արդյոք, գործատուն նման տեղեկանք/դիմում ներկայացնել այն վարձու աշխատողի վերաբերյալ, ով 2020 թվականի նոյեմբերի 27-ից սահմանված սահմանափակումների պատճառով չի աշխատում եւ վարձատրություն չի ստանում, թեպետ ծրագրվում է դեկտեմբերի 24-ից հետո՝ աշխատանքը վերականգնել եւ ներգրավել վարձու աշխատողներին:

- Գործատուն, ում տնօրինությամբ օբյեկտը, նոյեմբերի 28-ից, սահմանված սահմանափակումներից հետո, դադարեցրել է աշխատանքը եւ ծրագրում է դեկտեմբերի 24-ին վերականգնել այն, տեղեկանք/դիմում վարձու աշխատողների վերաբերյալ ներկայացնում է միայն այն դեպքում, եթե նոյեմբերի 28-ից մինչեւ դեկտեմբերի 24-ը վարձու աշխատողին ֆիքսված աշխատավարձ չի փոխանցվում:

- Իրավասո՞ւ է, արդյոք, գործատուն նման տեղեկանք/դիմում ներկայացնել այն վարձու աշխատողի վերաբերյալ, ով 2020 թվականի նոյեմբերի 27-ից սահմանված սահմանափակումների պատճառով չի աշխատում եւ վարձատրություն չի ստանում, թեպետ օբյեկտը չի դադարեցրել տնտեսական գործունեությունը եւ վարձու աշխատողների միայն մի մասն է ազատվել աշխատանքից:

- Գործատուն, ում տնօրինությամբ օբյեկտը նոյեմբերի 28-ից, սահմանված սահմանափակումներից հետո, շարունակում է տնտեսական գործունեությունը, թեպետ վարձու աշխատողների որոշ մասին աշխատանքից ազատելով, իրավասու չի տեղեկանք/դիմում ներկայացնել աշխատանքից ազատված վարձու աշխատողներին՝ 300 լարիի միանգամյա փոխհատուցում հանձնելու նպատակով:

- Որտե՞ղ եւ ի՞նչ ձեւով են 300 լարիի միանգամյա փոխհատուցում ստանալու համար տեղեկանք/դիմում ներկայացնելու անհատական ձեռներեցը, փոքր բիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը, ֆիկսացված հարկ վճարող ֆիզիկական անձը եւ միկրոբիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը:

- Անհատական ձեռներեցը, փոքր բիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը, ֆիկսացված հարկ վճարող ֆիզիկական անձը եւ միկրոբիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը 2020 թվականի դեկտեմբերի 3-ից մինչեւ դեկտեմբերի 24-ը հարկատուների ավտորիզացված սպառողների էջից լրացնում են «Գրանցված ինքնազբաղված անձի կողմից փոխհատուցում ստանալու մասին» դիմումի ձեւաթուղթը եւ հարցումը պարզում ամենաուշը՝ մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 28-ը:

- Անհատական ձեռներեցը, փոքր բիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը, ֆիկսացված հարկ վճառող ֆիզիկական անձը եւ միկրոբիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը ներկայացնելո՞ւ են, արդյոք, տեղեկանք/դիմում 300 լարիի միանգամյա փոխհատուցում ստանալու համար, եթե օբյեկտը, որտեղ իրականացնում էր տնտեսական գործունեություն, սահմանափակումների պատճառով անցել է հեռավար աշխատակարգի:

- Անհատական ձեռներեցը, փոքր բիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը, ֆիկսացված հարկ վճառող ֆիզիկական անձը եւ միկրոբիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձը, եթե նոյեմբերի 28-ից սահմանված սահմանափակումների արդյունքում չի իրականացնում տնտեսական գործունեություն այն հանրային տարածքներում, որոնք անցել են հեռավար աշխատակարգի, իրավասում է ներկայացնել տեղեկանք/դիմում՝ 300 լարիի միանգամյա փոխհատուցումը ստանալու նպատակով:

- Բացի վարձու աշխատողներից, անհատական ձեռներեցի, փոքր բիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձի, ֆիկսացված հարկ վճարող ֆիզիկական անձի եւ միկրոբիզնեսի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձի, էլի ո՞վ է իրավասու տեղեկանք/դիմում ներկայացնել 300 լարիի միանգամյա փոխհատուցում ստանալու համար:

- Բացի վերոնշյալ անձանցից, 300 լարիի միանգամյա փոխհատուցում ստանալու իրավունք ունի ցանկացած ֆիզիկական անձ (ինքնազբաղված անձ), որը, փաստորեն, իրականացնում էր տնտեսական գործունեություն Վրաստանում, որպես հարկատու գրանցված այն անձի օբյեկտում, որը սահմանված սահմանափակումների արդյունքում դադարեցրել է տնտեսական գործունեությունը:

ՈՎ ԻՆՉՔԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ԿՍՏԱՆԱ 2021-Ի ՀՈՒՆՎԱՐԻՑ

Ինչպես արդեն հաղորդել ենք, «Վրացական երազանքի» նախաձեռնությամբ, «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում իրականացված փոփոխությունների համաձայն, ամեն տարի կենսաթոշակները ավելացվելու են, եւ այդ ավելացումը քննարկվելու է խորհրդարանի հերթական տարվա պետական բյուջեի նախագծի քննարկմանը: Չնայած նրան, որ կենսաթոշակների ամենամյա ավելացումը արդեն վավերացված փաստ է, Վրաստանում կենսաթոշակների մեծությունը դեռեւս զիջում է տարածաշրջանի երկրներում սահմանված կենսաթոշակային գումարին:

Երկրի կառավարության նիստում, պետբյուջեի նախագծի քննարկմանը Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ, սահմանված օրենսդրությամբ, հաջորդ տարվա պետբյուջեի նախագծում նախատեսված է կենսաթոշակի ավելացում, հետեւաբար, կենսաթոշակառուները չեն սպասի ընտրությունների՝ կենսաթոշակների ավելացման համար:

Ի՞նչ սկզբունքով է ծրագրված 2021 թվականին կենսաթոշակի ավելացումը:

Խորհրդարանի հաստատմանը ներկայացված պետբյուջեի նախագծի համաձայն, 2021 թվականին, մինչեւ 70 տարեկան կենսաթոշակառուների համար, վերջին 12 ամսվա արժեզրկման միջին թվաբանականի հաշվառմամբ, կենսաթոշակը կավելացվի առնվազն 20 լարիով:

70 եւ ավելի բարձր տարիքի կենսաթոշակառուկների համար՝ վերջին 12 ամսվա արժեզրկման միջին թվաբանականին եւ վերջին վեց ամսիների համախառն ներքին արդարանքի (ՀՆԱ) իրական ավելացման ցուցանիշի միջին թվաբանականի 80 տոկոսի գումարելին, ինչը կազմում է առնվազն 25 լարի:

Այսպիսով՝ 2021 թվականի հունվարի 1-ից տարիքային կենսաթոշակառուների կենսաթոշակը կավելացվի 20-25 լարիով: Մինչեւ 70 տարեկանները կստանան 240, իսկ 70 եւ ավելի բարձր տարիքի կենսաթոշակառուները՝ 275 լարի:

Ինչ վերաբերում է բարձրալեռ բնակավայրերի մշտական բնակիչ կենսաթոշակառուներին, ապա, «Բարձրալեռ տարածաշրջանների զարգացման մասին» Վրաստանի օրենքով, նրանց կենսաթոշակի հավելավճարը կազմելու է այդ գումարի առնվազն 20 տոկոսը: Հետեւաբար, 2021 թվականի հունվարից բարձրալեռ բնակավայրերի մշտական բնակիչների՝ մինչեւ 70 տակեկան կենսաթոշակառուների կենսաթոշակը կկազմի 288 լարի, իսկ 70 եւ ավելի տարեկաններինը՝ 300 լարի:

Ավելացնենք, որ Վրաստանում միջին կենսաթոշակը կազմում է միջին աշխատավարձի 17-18 տոկոսը: Այդ առումով երկիրը տարածաշրջանում զիջում է հարեւաններին: Այսպես, Հայաստանում կենսաթոշակը կազմում է միջին աշխատավարձի 22 տոկոսը, Ադրբեջանում՝ 32, իսկ Ռուսաստանում՝ 33-34 տոկոսը:

Նշենք, որ, տնտեսագետների մեծամասնության համոզմամբ, կառավարության կողմից նախաձեռնված կենսաթոշակների ամենամյա ավելացման միտումը կարող է կարգավորել իրավիճակը, ինչը բեկումնային կարող է լինել կենսաթոշակային ապահովման գործում:

ՈՎՔԵՐ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿՍՏԱՆԱՆ 100 ԼԱՐԻԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի կառավարության որոշմամբ, որոշ սոցիալապես անապահով ընտանիքներ եւ հաշմանդամություն ունեցող անձինք, պետությունից 100 լարիի օգնություն կստանան 2021 թվականի հունվարից, 6 ամիս շարունակ:

Հունվարից օգնություն կստանան.

* Սոցիալապես անապահով ընտանիքների միասնական բազայում գրանցված ընտանիքները, որոնց սոցիալական բալերը 65 000-ից մինչեւ 100 000 է (ըստ ընտանիքի անդամների քանակի):

* Սոցիալապես անապահով ընտանիքների միասնական բազայում գրանցված ընտանիքները, որոնց սոցիալական բալերը 0-ից մինչեւ 100 000 է եւ ունեն 3 կամ ավելի անչափահաս՝ մինչեւ 16 տարեկան երեխա:

* Մինչեւ 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաները եւ ծանր հաշմանդամություն ունեցող անձինք:

Սոցիալապես անապահով ընտանիքների միասնական բազայում գրանցված ընտանիքները, որոնց սոցիալական բալերը 65 000-ից մինչեւ 100 000 է, օգնությունը կփոխանցվի՝ ըստ ընտանիքի անդամների քանակի: Օրինակ, 1 անդամից բաղկացած ընտանիքը ամսական կստանա 70 լարի, 2 անդամից բաղկացած ընտանիքը՝ 90 լարի, իսկ երկուսից ավելի անդամից բաղկացած ընտանիքը ամեն անդամի համար կստանա 35 լարի:

Անձինք, որոնք գրանցված են սոցիալապես անապահովների ցուցակում եւ բավարարում են փոխհատուցման պայմաններին, օգնությունը կստանան մեխանիկ որեն՝ առանց որեւէ տեղ գրանցվելու եւ դիմում գրելու: Գումարն ուղիղ կփոխանցվի նրանց հաշվեհամարին:

Էջը պատրաստեց
ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

COVID - 19

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հիվանդությունների վերահսկման կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի խոսքով, շաբաթական կտրվի համավարակաբանական իրավիճակի, ինտենսիվ թեստավորման եւ հիվանդանոցային հատվածի իրավիճակի գնահատական, ըստ որի, նախատեսվում են հետագա քայլերը երկրում համավարակաբանական իրավիճակի վատթարացումը կանխելու համար:

Առողջապահության ոլորտի մասնագետները կարծում են, որ սահմանափակող միջոցներ են անհրաժեշտ կլինիկական հատվածն ավելի արդյունավետ կառավարելու, հիվանդանոցային համակարգը չծանրաբեռնելու եւ, նախեւառաջ, ստացիոնար ծառայություններ պահանջող մարդկանց դուրսը չթողնելու համար: Նրանց գնահատմամբ, իրավիճակն է՛լ ավելի կայունացնելու համար, շատ կարեւոր է պահպանել սահմանված սահմանափակումների եւ ինտենսիվ թեստավորումների հետեւանքով ձեռք բերված արդյունքները:

Հանրագումարելով հանդիպման արդյունքները, Գիորգի Գախարիան նշեց, որ կարեւոր է, մի կողմից, ավելի քիչ վնաս հասցնել տնտեսությանը եւ, միեւնույն ժամանակ, արդյունավետ միջոցներ ձեռնարկել վիրուսի տարածման դինամիկան կառավարելու տեսանկյունից քաղաքացիների կյանքն ու առողջությունը պաշտպանելու համար:

Հանդիպմանը մասնակցում էին Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Մայա Ցքիտիշվիլին, առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն, ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին եւ միջգերատեսչական խորհրդի գործադիր շտաբի պետ Ալեքսանդր Խոջեւանիշվիլին: Քննարկմանը մասնակցում էին Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամղրելիձեն, կենտրոնի փոխտնօրեն Պաատա Իմնաձեն, առողջապահության փորձագետ Ակակի Զոիձեն, իմունոլոգ-ալերգոլոգ Բիձինա Կուլումբեգովը:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՎԱՐԱԿՎԱԾԻ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԺԵՔԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 600 ԱՄՆ ԴՈԼԱՐ Է

Վրաստանի կլինիկաներում կորոնավիրուսով վարակված մեկ հիվանդի բուժման համար երկրի կառավարությունը միջինը ծախսում է 2000 լարի կամ՝ 600 դոլար:

Վերոնշյալ գումարի մեջ չեն մտնում այնպիսի ծախսեր, ինչպիսիք են թթվածնով ապահովելը, շնչառական սարքերի մոբիլիզացիան ու բուժանձնակազմի նախապատրաստումը:

Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիայի խոսքով, որոշ դեպքերում բուժման ծախսերը հասնում են նույնիսկ 10 հազար լարիի (մոտ՝ 3000 դոլար):

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 71 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 71 012 միլիոնից: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 1 594 254 հազարը: Ապաքինվել է 49 միլիոն 373 654 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է **ԱՄՆ**-ը, որտեղ կա հաստատված **16 080 812** դեպք: Այստեղ մահացածների թիվը **300 363** է: Երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **9 814 064**-ի, մահացածներինը՝ **142 417**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է, որտեղ վարակվել է **6 794 910**, մահացել՝ **179 897** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **2 597 711**, վարակի հետեւանքով մահացել՝ **45 893** մարդ: Ռուսաստանին հաջորդում են Ֆրանսիան, Իտալիան, Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Իսպանիան եւ Արգենտինան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **146 317-ի**, մահացածներինը՝ **2 445-ի**, ապաքինվածներինը՝ **123 474-ի**:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **167 155** մարդ: Վարակից մահացել է **1 840,** ապաքինվել՝ **103 550** մարդ:

Վերջին տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **183 099,** մահացել՝ **1 694,** ապաքինվել՝ **150 461** մարդ:

*Դեկտեմբերի 11-ին կորոնավիրուսով վարակման 4 146 նոր դեպքերից **1 708-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 313-ը, Իմերեթիում՝ 636-ը, Քվեմո Քարթլիում՝ 281-ը, Շիդա Քարթլիում՝ 268-ը, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 397-ը, Կախեթիում՝ 252-ը, Գուրիայում՝ 82-ը, Մցխեթա-Մթիանեթիում՝ 116ը, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 24, Սամցխե-Ջավախեթիում՝ 69-ը:***

ԷԿԱՏԵՐԻՆԵ ՏԻԿԱՐԱՁԵ. «ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՉԵՂԱՐԿՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԸՆԴՈՒՆՎԻ՝ ԵԼՆԵԼՈՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻՑ»

Վրաստանի առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն, անդրադառնալով սահմանափակումների չեղարկման հարցին, հայտարարեց, որ դեռ վաղ է խոսել այն մասին, թե երբ եւ ինչպես կվերացվեն կորոնավիրուսի հետ կապված սահմանափակումները:

Նախարարի խոսքով, այս փուլում երկրում վարակի տարածման ցուցանիշը կայուն է:

- Կարեւոր է նշել, որ այս փուլում մենք ունենք կայուն ցուցանիշ, վարակվածների թիվը չի անցնում 4500-ը: Մենք դեռ չենք ստացել Սեւ ուրբաթի էֆեկտը, որը, գիտեք, որքան դրամատիկ է արտացոլվել իրականում, որի հետեւանքները մենք դեռ քաղում ենք: Հետեւաբար, դեռ վաղ է խոսել այն մասին, թե ինչպես կչեղարկվեն սահմանափակումները, քանի որ մեզ դեռ անհրաժեշտ է, որ համաճարակաբանները վերլուծեն հաջորդ ալիքը, որը կարող է սպասվել: Ինչ վերաբերում է սահմանափակումների վերանայմանը, ապա թվերը ցույց կտան: Մենք, ինքնաբերաբար, որոշումներ չենք կայացնում, մենք դիտում ենք վարակի աճի դինամիկան, ինչպես նաեւ մահացության դեպքերը: Կարեւոր է հաշվի առնել կլինիկաների գերծանրաբեռնվածությունը, նրանց հնարավորություն տալ որակյալ ծառայություններ մատուցել բոլոր հիվանդներին, մենք համատեղ որոշում կկայացնենք այս ամենը վերլուծելիս,- հայտարարեց Էկատերինե Տիկարաձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՔԻՉ ԷՐ, ՀԻՄԱ ԷԼ՝ ԳՐԻՊԻ ՎԻՐՈ՞ՒՍ

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ, բացի կորոնավիրուսային վարակից, Վրաստանում արդեն շրջանառության մեջ է հայտնվել B գրիպի վիրուսը:

- Մենք արտադրում ենք «շաբաթական մոնիտորինգի եւ շաբաթը մեկ անգամ վերահսկում ենք գրիպի վիրուսի ու շնչառական վիրուսների շրջանառությունը երկրում: Երեկվա մոնիտորինգում առաջին անգամ պարզվեց, որ B տիպի գրիպն արդեն սկսել է շրջանառվել, այսինքն, այս սեզոնին առաջին անգամ գրիպի վիրուսը արդեն հայտնվել է կորոնավիրուսային վարակի հետ միասին:

Ինչպես գիտեք, գրիպը մեզ մոտ ակտիվանում է դեկտեմբերին, մենք չգիտենք, թե այս տարի որքան ակտիվ կլինի գրիպը, եթե վերցնենք հարավային կիսագնդի փորձը, ամառային գրիպը պակաս ակտիվ էր, կան բազմաթիվ վարկածներ, այդ թվում՝ մարդիկ սովորել են որոշակի կանխարգելիչ միջոցների, օրինակ՝ պաշտպանիչ դիմակ կրելը, ավելի շատ մարդիկ պատվաստվում են գրիպի դեմ, ավելի շատ մարդիկ են պահպանում հեռավորության եւ սանիտարական կանոնները: Հնարավոր է եւ հավանական, որ գրիպի սեզոնը մի փոքր մեղմ լինի, բայց դա մեզ հանգստանալու առիթ չի տալիս: Կլինիկական առումով, գրիպի վիրուսի եւ կորոնավիրուսի վարակը մոտավորապես նույնն է: Փորձառու բժիշկը կարող է դա կլինիկապես տարբերակել, վերջնական դիֆերենցիալ ախտորոշումը կատարվում է լաբորատոր հետազոտությունների հիման վրա,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն՝ հավելելով, որ այն անձը, ով վարակվել է կորոնավիրուսով, կարող է նաեւ գրիպի վիրուսով հիվանդանալ:

- Գրիպի վիրուսը տարբեր է, իսկ կորոնավիրուսը՝ բոլորովին այլ: Հետեւաբար, այն անձը, ով վարակվել է կորոնավիրուսով, կարող է նաեւ գրիպի վիրուսով հիվանդանալ, անհրաժեշտ են պաշտպանական միջոցներ: Այն մարդը, ով վարակվել է կորոնավիրուսով, կարող է ազատ պատվաստվել գրիպի դեմ,- ասաց Ամիրան Գամղրելիձեն:

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՏԵՂ ԿԱՐԵԼԻ Է ԱՆՑՆԵԼ ԱՆՎՃԱՐ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Ինչպես նշեցինք, Վրաստանի կառավարությունը իր հատուկ կայքէջում հրապարակել է այն կլինիկաների անվանումները, որտեղ բնակիչները, անհրաժեշտության դեպքում, կարող են անցնել անվճար թեստավորում:

Մասնավորապես, Թբիլիսիում անվճար թեստավորման համար կարելի է դիմել «Մանկաբուժության կլինիկա» ՍՊԸ-ին, «Ընտանեկան բժշկության ազգային ուսումնական կենտրոն» ՍՊԸ-ին, «Բուժիչ-ախտանշանային կենտրոն»՝ Սամգորի մեդի ՍՊԸ-ին, «Բժշկական հոլդինգ-23» ՍՊԸ-ին, «Թբիլիսյան ծովի հոսպիտալ» ՍՊԸ-ին, «Վիվամեդի» ՍՊԸ-ին, «Անհետաձգելի վիրաբուժության եւ տրավմատոլոգիայի կենտրոն» ՍՊԸ-ին, «Էվեքսի» բաժնետիրական ընկերությունների Սաբուրթալոյի, Մթածմինդայի, Իսանիի, Վարկեթիլիի, Դիդուբեի, Գլդանիի մունիցիպալիտետային պոլիկլինիկաներին, «Թբիլիսիի սիրտ-անոթային կլինիկա» ՍՊԸ-ին, «Թբիլիսիի մանկական ինֆեկցիոն կլինիկա-հիվանդանոց» ՍՊԸ-ին եւ այլն:

Ինտենսիվ անվճար թեստավորման բուժհաստատություններ են գործում նաեւ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում: Մասնավորապես, Ախալքալաքիի մունիցիպալիտետում նման ծառայություն կարող են մատուցել «Էվեքսի» կլինիկա բաժնետիրական ընկերությունը Ախալքալաքիում, «Ախալքալաքիի հասարակական առողջապահության պաշտպանության» մունիցիպալային կենտրոնը, Ասպինձայի «Էվեքսի» կլինիկա բաժնետիրական ընկերությունը, «Ասպինձայի հասարակական առողջապահության պաշտպանության» մունիցիպալային կենտրոնը, Ախալցիխեի «Սուրբ Պանտելեմոնի» անվան կլինիկան, Ախալցիխեի մունիցիպալային հասարակական առողջապահության կենտրոնը, Ախալցիխեի «Իմեդի» կլինիկա ՍՊԸ-ը, Նինոծմինդայի «Էվեքսի» կլինիկան:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում անվճար թեստավորման համար կարելի է դիմել Բոլնիսիի մունիցիպալային հասարակական առողջապահության կենտրոնին, Թեթրիծղարոյի Հասարակական առողջապահության եւ անվտանգ միջավայրի ապահովման կենտրոնին, Մառնեուլիի «Զեո» հոսպիտալի «Մառնեուլիի ամբուլատորային կենտրոն» ՍՊԸ-ին, «Զեո» հոսպիտալի Մառնեուլիի բազմաճյուղ բժշկական կենտրոն ՍՊԸ-ին, «Պրոֆեսոր» ՍՊԸ-ին, «Մարնեկոր» ՍՊԸ-ին,«Մադ եւ Մեդի»-ին, Մառնեուլիի մունիցիպալային հիվանդությունների վերահսկողության եւ հասարակական առողջապահության կենտրոնին, Ծալկաում՝ «Տարածաշրջանային առողջապահության կենտրոնի» Ծալկայի բժշկական հաստատություն ՍՊԸ-ին:

ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ՝ ՆԱԵՎ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի խոսքով՝ կորոնավիրուսի թեստավորումը հնարավոր կլինի անել նաեւ դեղատներում:

Այս դեպքում, դեղատունը պետք է համապատասխանի տվյալ պայմաններին: Սա արվում է՝ գործընթացն առավել հասանելի դարձնելու:

- Ամեն ինչ հնարավոր է, մենք հետեւում ենք այս փուլում: Թեստավորումը լայնածավալ է դարձել, մինչ հիմա ունեինք 30 հաստատություն, շուտով կունենանք 80 Թբիլիսիում, 300 էլ՝ երկրի ծավալով: Հետագայում՝ ավելի կընդալայնենք: Դեղատներն ակտիվ օգտագործվել են «Հեպատիտ C»-ի սքրինինգի ժամանակ,- ասել է Գամղրելիձեն:

Որոշ երկրներում, խոսք է գնում արդեն, կորոնավիրուսի թեստի՝ դեղատներում վաճառվելու հնարավորության մասին (հղիության թեստի նմանօրինակը): Գամղրելիձեն չի բացառում, որ մոտ ապագայում հնարավոր կլինի գնել թեստը եւ ինքնուրույն անցնել թեստավորում:

Էջը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ, ՍՊԻՏԱԿՈՒՄ ԵՎ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ ՀԱՐԳԵՅ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կառավարության ղեկավարը Սպիտակ եւ Վանաձոր քաղաքներում նույնպես ծաղկեպսակներ դրեց երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողներին եւ կատարեց մոմավառություն:

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը ուղերձ հղեց 1988 թվականի երկրաշարժի տարելիցի կապակցությամբ: Ուղերձում նախագահն ազգային միասնության եւ համաձայնության կոչ արեց:

Հայաստանում 32 տարի առաջ տեղի ունեցավ խոշոր բնական աղետ, որը լուրջ մարտահրավեր դարձավ երկրի համար: Հաշված վայրկյանների ընթացքում ավերիչ երկրաշարժը հազարավոր շինությունների փլուզման, տասնյակ հազարավոր մարդկանց մահվան պատճառ դարձավ: 1988 թվականի դեկտեմբերի 7-ին տեղական ժամանակով ժամը 11-ն անց 41 րոպե 22,7 վայրկյանին Հայաստանի հյուսիսում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ՝ էպիկենտրոնում 10 բալ ուժգնությամբ:

ՄԻՄՅԱՆՑ ՀԱԿԱՍՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ ԱԿՑԻԱՆԵՐ

ՄԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ՝ ՅՈՒՅՑԵՐ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ

Հայաստանի մայրաքաղաք Երեւանում, երկրի մյուս քաղաքներում շարունակվում են փոխանընդունելի պահանջներով ցույցերը:

Դեռեւս նոյեմբերի 11-ից, Լեռնային Ղարաբաղի հրադադարի համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո, Երեւանում, Հայաստանի մյուս քաղաքներում սկսված ցույցերը չեն դադարում: Մի կողմից խորհրդարանական եւ արտախորհրդարանական 16 կուսակցությունների հրահրումով ցույցեր են անցկացվում վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով, մյուս կողմից՝ երկրի բնակչության բավական ստվար հատվածը հանդես է գալիս ի պաշտպանություն վարչապետի ու նրա դիրքորոշման:

Նշենք, որ վարչապետի հրաժարականի պահանջով հանդես են եկել Հայաստանի երկու նախկին նախագահներն ու գործող նախագահը, ինչպես նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը:

Խորհրդարանական եւ արտախորհրդարանական ավելի քան 16 կուսակցություններից բաղկացած «Հայրենիքի փրկության շարժում»-ը վարչապետի միասնական թեկնածու է առաջադրել Վազգեն Մանուկյանին: Նա նախկինում զբաղեցրել է Հայաստանի վարչապետի, Պաշտպանության նախարարի եւ Հանրային խորհրդի նախագահի պաշտոնները:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԵՐԸ ՀԱՅՏՆԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՏԵՍԱԿԵՏԸ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ոչ մի խնդիր չի տեսնում նրանում, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը պահանջել են իր հրաժարականը:

Հանդես գալով Հայաստանի Ազգային ժողովում, կառավարության հետ հարցուպատասխանի ընթացքում, վարչապետը հայտարարեց.

- Ոչ մի խնդիր չեմ տեսնում նաեւ նրանում, որ մեր եկեղեցու ներկայացուցիչները՝ Վեհափառ հայրապետերը հանդես են եկել նման կոչով, իրենց տեսակետն են հայտնել: Ես դրա մեջ ողբերգություն չեմ տեսնում: Յուրաքանչյուրը, առավել եւս՝ հայրապետներն ունեն իրենց դիրքորոշումն արտահայտելու անքակտելի իրավունք, կառավարությունը եւ ժողովուրդն ունի իրավունք այդ տեսակետին չհամաձայնել:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 8-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին հորդորել են հրաժարական ներկայացնել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Դեկտեմբերի 6-7-ը, Հայաստանի ԱԳ նախարար Արա Այվազյանը աշխատանքային այցով գտնվում էր Մոսկվայում, որտեղ հանդիպում ունեցավ իր ռուս գործընկեր Սերգեյ Լավրովի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկել են Լեռնային Ղարաբաղում մարդասիրական արձագանքման կենտրոն ստեղծելու հարցերը: Հանդիպման ավարտից հետո երկու երկրների ԱԳ նախարարները հանդես եկան համատեղ մամլո ասուլիսում:

- Մենք խոսել ենք հումանիտար արձագանքման կենտրոն ստեղծելու հարցերի մասին: Դա նախագահ Պուտինի նախաձեռնությունն է: Մենք առաջարկել ենք այդ կենտրոնը դարձնել միջազգային՝ Հայաստանի եւ Ադրբեջանի մասնակցությամբ: Հիմա քննարկվում են այդ նախաձեռնության գործնական հարցերը: Դրա իրականացման գործին կմասնակցեն բազմաթիվ ռուսական նախարարություններ եւ գերատեսչություններ,- ասաց Լավրովը:

ՌԴ արտգործնախարարը հայտնեց, որ հայ գործընկերոջ հետ բանակցություններն անցել են ավանդական ջերմ ու դաշնակցային, ռազմավարական-գործընկերային մթնոլորտում:

ԾԽԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՆՈՒՅՆԻՍԿ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԱԵՎ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի Ազգային ժողովը քննարկում է կառավարության կողմից ներկայացված օրենքի նախագիծը, որով, ի թիվս այլ փոփոխությունների, առաջարկվում է ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներից եւ տաքսիներից զատ, 1 տուգանային միավոր կիրառել նաեւ անձնական տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ընթացքի ժամանակ ծխելու համար:

Նախագծի նպատակն է՝ ապահովել ճանապարհային երթեւեկության ոլորտում կատարվող իրավախախտումների համար կիրառվող տուգանային միավորների համակարգի ամբողջական եւ պատշաճ գործարկումը, կանխարգելել ճանապարհային երթեւեկության կանոնների հնարավոր խախտումները՝ վարելու իրավունք չունեցող անձանց կողմից: Այսինքն՝ այն խախտումները, որոնց համար որպես վարչական տույժ նախատեսված է միայն վարելու իրավունքից զրկում, ապա վարելու իրավունք չունեցող անձի կողմից կատարելու դեպքում կսահմանվի տուգանքի ձեւով վարչական պատասխանատվություն:

Այսպիսով՝ սահմանվում է, որ վարորդի կողմից ընթացքի ժամանակ ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը կառաջացնի տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով, եւ տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:

Օրենսգրքում նախատեսվում է հստակ ամրագրել, որ մինչեւ 2022 թվականի հուլիսի 1-ը տուգանային միավորը որպես վարչական տույժ կիրառվելու է միայն տեսանկարահանող եւ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների համար:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՀԱՍՏԱՏԵՑ ԵՐԿՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Դեկտեմբերի 10-ին Հայաստանի Ազգային ժողովն ընդունեց երկրի 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը: Այն ընդունվեց խորհրդարանի լիագումար նիստում քվեարկությամբ՝ ստանալով 84 կողմ, 14 դեմ ձայներ:

«Լուսավոր Հայաստան» խմբակցությունն ավելի վաղ հայտնել էր, որ դեմ են ներկայացված նախագծին՝ նշելով, որ այն իներցիոն է եւ չի համապատասխանում ներկայիս իրողություններին: Ընդդիմադիր մյուս՝ «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը նիստին չէր մասնակցում: 2021թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծով հաջորդ տարվա համար կանխատեսվել է 3,2 տոկոս տնտեսական աճ:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ԶԱՐԴԱՐԱՆՔ ՉԻ ԼԻՆԻ

Երեւանի Հանրապետության հրապարակում ամանորյա տոնածառն այս տարի չի տեղադրվելու, ամանորյա զարդարանք նույնպես չի լինելու: Նոյեմբերի 24-ին ավագանին որոշեց ամանորյա միջոցառումների իրականացման համար նախատեսված 100 մլն դրամը, կապիտալ բնույթի աշխատանքների իրականացման նպատակով, տրամադրել Ստեփանակերտին:

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության տեղեկատվությամբ, ինչպես ներկայումս, այնպես էլ 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող իրավակարգավորումների համաձայն՝ վարորդական վկայականի փոխանակման դեպքում քննություններ հանձնելու պահանջ նախատեսված չէ: «Միաժամանակ հորդորում ենք այն անձանց, ում վարորդական վկայականի գործողության ժամկետը լրանում է 2021 թվականին կամ դրանից հետո, ավելորդ կուտակումներ չառաջացնելու նպատակով դրանց փոխանակման համար չհերթագրվել նախատեսված ժամանակից շուտ»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ՀԻՆ ՆՄՈՒՇԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԿՐԿԻՆ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

Դեկտեմբերի 10-ին Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Հայաստանի քաղաքացու անձնագրի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Նույնականացման քարտերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Փաթեթն ընդունվեց միաձայն՝ 87 կողմ ձայնով:

Կառավարության ներկայացրած նախագծով առաջարկվում է Հայաստանի քաղաքացիներին հին նմուշի՝ ոչ կենսաչափական անձնագրերի տրամադրման ժամկետը կրկին երկարաձգել՝ 2021 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանելով մինչեւ 2022 թվականի հունվարի 1-ը:

Փաթեթի առաջին ընթերցմամբ ընդունումից հետո, մինչեւ երկրորդ ընթերցումը, դրանում փոփոխություններ չէին կատարվել:

ԲԵՆԶԻՆԻ ԵՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԳՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Հայաստանում 2020 թվականի նոյեմբերին, 2019 թվականի նոյեմբերի համեմատ, բենզինի եւ դիզելային վառելիքի գները նվազել են 13,9 եւ 23,8 տոկոսով, իսկ 2019 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 15,6 եւ 25,2 տոկոսով:

Հայաստանի վիճակագրական կոմիտեի տեղեկատվությամբ, 2020 թվականի նոյեմբերին, հոկտեմբերի համեմատ, գրանցվել է բենզինի 0,4 տոկոս գնաճ եւ դիզելային վառելիքի 3,6 տոկոս գնանկում:

CyanMagentaYellowBlack

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱԼԿԱ-ՆԻՆՈԾՄԻՆԴԱ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՓԱՐՎԱՆԱՅԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՀԱՏՎԱԾԸ ԳԻՇԵՐԸ ՓԱԿՎՈՒՄ Է

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարության հայտարարությամբ, օդերեւութաբանական բարդ պայմանների պատճառով, ներքին նշանակության Կոդա-Փարցխիսի-Մանգլիսի-Ծալկա-Նինոծմինդա ճանապարհի 94 կմ-110 կմ (Փարավանայի լեռնանցք) հատվածում ժամը 21:00-ից մինչեւ ժամը 08:00-ն արգելված է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների տեղաշարժը, իսկ օրվա մնացած ժամերին երթեւեկությունն ազատ է:

Նույն արգելքը սահմանվում է նաեւ միջազգային նշանակության Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհի Գուդաուրի-Կոբի հատվածում:

Ճանապարհների մնացած հատվածում երթեւեկությունն ազատ է:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ 2-Ը ԿՎԵՐՍԿՍԻ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Վրաստանի երկաթուղու տարածած տեղեկության համաձայն, դեկտեմբերի 24-ից հունվարի 2-ը ներառյալ, Վրաստանի երկաթուղու ուղեւորափոխադրումները կվերսկսվեն բոլոր հանձնարարականների պահպանմամբ՝ հիմնական ուղղություններով:

«Տոմսերը հնարավոր է գնել առցանց: Դրամարկղերը կբացվեն նախօրեին, դեկտեմբերի 23-ին: Տոմսեր հնարավոր է գնել կայքէջի միջոցով. www.railway.ge կամ ներբեռնել http://onelink.to/c6dnm8 հավելվածը, ինչպես նաեւ Վրաստանի երկաթուղու գործընկեր կայքէջերից. www.tkt.ge; www.biletebi.ge; www.matarebeli.ge:

Հիշեցնենք, որ գնացք նստելուց առաջ ուղեւորները պետք է պահպանեն սոցիալական հեռավորություն, ջերմաչափվեն, անցնեն ախտահանման լուծույթով ներծծված գորգով եւ ձեռքերը մշակեն ախտահանիչ լուծույթով: Առանց պաշտպանիչ դիմակի ուղեւորները չեն կարողանա նստել գնացք, ինչպես նաեւ, ուղեւորության ընթացքում նրանք իրավունք չեն ունենա հանել պաշտպանիչ դիմակը»,- ասվում է Վրաստանի երկաթուղու տարածած տեղեկության մեջ:

ՖՈՒՏԲՈԼ

ԱՇԽԱՐՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ՀԱՆԴԵՍ ԿԳԱ B, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ J ԽՄԲՈՒՄ

Դեկտեմբերի 7-ին, Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում անցկացվեց աշխարհի 2022 թվականի առաջնության ընտրական փուլի վիճակահանությունը, որի արդյունքում Վրաստանի հավաքականն ընդգրկվեց B, իսկ Հայաստանի ազգային ընտրանին՝ J խմբում:

Ընտրական մրցաշարում Վրաստանի մրցակիցներն են Իսպանիայի, Շվեդիայի, Հունաստանի եւ Կոսովայի հավաքականները, իսկ Հայաստանի հավաքականն ընտրական փուլում իր ուժերը չափելու է Գերմանիայի, Ռումինիայի, Իսլանդիայի, Հյուսիսային Մակեդոնիայի եւ Լիխտենշտեյնի հավաքականների հետ:

Վիճականահությամբ խմբերը դասակարգվել են հետեւյալ կերպ.

A խումբ - Պորտուգալիա, Սերբիա, Իռլանդիա, Լյուքսեմբուրգ, Ադրբեջան:

B խումբ - Իսպանիա, Շվեդիա, Հունաստան, Վրաստան, Կոսովո:

C խումբ - Իտալիա, Շվեյցարիա, Հյուսիսային Իռլանդիա, Բուլղարիա, Լիտվա:

D խումբ - Ֆրանսիա, Ուկրաինա, Ֆինլանդիա, Բոսնիա, Ղազախստան:

E խումբ - Բելգիա, Ուելս, Չեխիա, Բելառուս, Էստոնիա:

F խումբ - Դանիա, Ավստրիա, Շոտլանդիա, Իսրայել, Ֆարերյան կղզիներ, Մոլդովա:

G խումբ - Նիդերլանդներ, Թուրքիա, Նորվեգիա, Մոնտենեգրո, Լատվիա, Ջիբրալթար:

H խումբ - Խորվաթիա, Սլովակիա, Ռուսաստան, Սլովենիա, Կիպրոս, Մալթա:

I խումբ - Անգլիա, Լեհաստան, Հունգարիա, Ալբանիա, Անդորրա, Սան Մարինո:

J խումբ - Գերմանիա, Ռումինիա, Իսլանդիա, Հյուսիսային Մակեդոնիա, Հայաստան, Լիխտենշտեյն::

Կատարում կայանալիք Աշխարհի գավաթի ուղեգրի համար պայքարող եվրոպական 55 թիմեր բաժանվել են 10 խմբի, իսկ եզրափակիչ փուլում մրցելու են 13 երկրներ: ՈւԵՖԱ-ի գոտում ընտրական մրցաշարի առաջին տուրը կանցկացվի 2021 թվականի մարտի 24-25-ին: Ընտրական հիմնական փուլը կավարտվի հոկտեմբերի 16-ին: Փլեյօֆը կանցկացվի 2022 թվականի մարտի 24-ին, 25-ին, 28-ին եւ 29-ին:

Աշխարհի գավաթի եզրափակիչ փուլը կանցկացվի Կատարում նոյեմբերի 21-ից դեկտեմբերի 18-ը:

ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ 89-ՐԴՆ Է, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ 99-ՐԴԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ընթացիկ տարվա եզրափակիչ վարկանիշային աղյուսակը: Նշենք, որ կորոնավիրուսի համավարակի կապակցությամբ ներդրված սահմանափակումների արդյունքում, ֆուտբոլային հանդիպումների չեղարկման պատճառով, նախորդ աղյուսակի համեմատությամբ փոփոխություններ չեն վավերացվել: Թե՛ Վրաստանի եւ թե՛ Հայաստանի հավաքականները պահպանել են իրենց դիրքերը, համապատասխանաբար, զբաղեցնելով աղյուսակի 89-րդ եւ 99-րդ հորիզոնականները:

Վարկանիշը գլխավորում է Բելգիայի հավաքականը, որին հաջորդում են Ֆրանսիան, Բրազիլիան, Անգլիան, Պորտուգալիան, Իսպանիան, Արգենտինան, Ուրուգվայը, Մեքսիկան եւ Իտալիան:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Հեծյալ զորամաս, որ պատերազմի ժամանակ եւ հաղթությունից հետո ուղարկվում էր թշնամու երկիրը՝ գերի եւ ավար բերելու: 9.Յար: 10.Ազգ Իսպանիայում: 11.Սերբիայի մայրաքաղաքը: 13.Հայ փիլիսոփա, հասարակական-եկեղեցական գործիչ ... Կողբացի: 16.Ծովափնյա առողջարան ՌԴ-ում: 17.Մարդկանց խումբ, որը իրականացնում է ընդհանուր գործողություն: 19.Անկասկած: 22.«... վրա, Քեռի Քուչի»: 24.Նշանավոր շվեդ ռեժիսոր եւ գրող ... Բերգման: 25.Հայկական ֆուտբոլային թիմ: 27.Միջնադարյան խոշոր վանքային համալիր Հայաստանում: 29.Արեւելյան որոշ ժողովուրդների գլխի փաթթոց: 32.Ջրաներկ: 33.Ուկրաինացի կոմպոզիտոր Պավել ...: 35.Թույլ, դժգույն: 37.Պտուղների հատիկածեւ սերմերը: 39.Կոնդակ, գրություն: 40.Խաչածաղկավոր բույս: 43.Բացի ասվածից՝ որոշվածից: 44.Վրացի դերասան ... Աբաշիձե: 47.Ոչխարի բուրդ: 49.Սիրեցյալ: 50.ԵՎ-րամիության անդամ երկրների դրամական միավորը: 53.Ներքեւ (հակ.): 54.Սապատավոր կենդանի: 55.Վրան աղ քսել: 57.Էլեկտրոնային հաշվիչ մեքենա: 58.Քաղաք Թուրքիայում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հետեւել: 2.Պարատեսակ: 3.Անրոց Ախալցիխեում: 4.Ոսկուց պատրաստված: 5.Հավատ, դավանանք: 6.Գնդի նման հավաքված՝ փաթաթված բան: 8.Քաղաք եւ նավահանգիստ Իսպանիայում: 12.Լողլող մարդու քայլ: 14.Տավարի ծնկի ոսկոր: 15.Գաղափար: 18.Աշխարհամաս: 19.Կոպիտ, անտաշ: 20.Թխվածք: 21.Մարդու երեսի մազը: 23.Ներմուծում: 26.Ե՛վ նկար, ե՛ւ գործվածք: 28.Այն, նա (արեւմտ.): 29.Մոնթե Մելքոնյան: 30.Օդի (ժող.): 31.Ջրապտույտ, հորձանուտ: 34.Մեքենա, որը ուրիշ մեքենա է քաշում, քարշան: 36.Անճոռնի, անձեւ: 38.Փոքր Արարատ: 41.Հուդարկավորություն (ժող.): 42.Հունաստանի ամենախոշոր եւ Միջերկրական ծովի մեծությամբ հինգերորդ կղզին: 45.Կարուձեւ անող արհեստավորի «զենքերից»: 46.Որեւիցե: 48.Արաքս, Երասխ: 51.Ողնաշար, ողնոսկր: 52.Դեռ (ժող.): 56.Արի՛:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Գանձասար: 5.Ծերենց: 10.Աֆղանստան: 11.Կորալ: 12.Սով: 13.Ալ: 15.Աց: 17.Մռավ: 20.Մոնա: 22.Սանդրա: 24.Տրե: 25.Մարո: 26.Իմ: 28.Վանա: 29.Ոսկ: 30.Աման: 32.Կիսա: 33.Տաք: 34.Ողբալի: 35.Տկար: 37.Ալիշան: 39.Սի: 40.Ցիկ: 41.Մանե: 43.Ապի: 46.Ոսպ: 47.Ֆլորա: 50.Ալար: 51.Զտել: 52.Արարք: 53.Իքս: 54.Որ: 56.Վարագա: 57.Աթանես:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Գրանելի: 2.Նեղոս: 3.Ազնիվ: 4.Արտեկ: 8.Երկու: 7.Եվրո: 8.Ցոլաց: 9.Անբառ: 14.Լաս: 15.Անրի: 16.Հոմանիշ: 17.Մարականա: 18.Վարսակ: 19.Սրտաբաց: 21.Նան: 23.Ամոքել: 27.Տրոյա: 28.Վալիկո: 29.Ոստրե: 31.Մալի: 33.Տրիպոլի: 36.Ասալա: 38.Ամպեր: 42.Նեմրութ: 44.Իրաք: 45.Աստրա: 48.Արսեն: 49.Ալմա: 51.Զով: 52.Արա: 55.Թե:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445